

լութեան. նման սրբագործ նշանին, խաչին, մասունքներուն, գրքին:

Ըստ Հաւելի «Հաւանաբար հնագոյն կտորները (=Աշխարհի հնագոյն ծանօթ գորգերը) որ մնացած են՝ Վիշապ կապերտներ կոչուածներն են որոնք, կը համարուի թէ արտադրուած էին Ժ.Գ. դարէն Ժ.Է. դար եւ հաւանաբար աւելի կանուխ»¹: Ժամանակամիջոցը որ կու տայ կարելի է փոփոխել, եւ ըստ իս պէտք է աւելի ետ մղել: Ստիպուած եմ այս կարծիքին հետեւիլ երբ նկատի կ'առնեմ Վիշապ գորգերու վիշապաձեւ գծագրութեանց զարմանալի զարգացումը եւ ապշեցնող տարբերութիւնը երկու նոյնածին գծագրութեանց մէջ: Հնութեան կարգով նախ առնել ստիպուած եմ Պերլինի Քայզըր Ֆրէտէրիք թանգարանին նշանաւոր գորգը:

Շատ անօրինակ կապերտ մըն է այդ կտորը, զոր ինքս ալ շօշափելու եւ քննելու առիթ ունեցայ: Հաւելյ կը հաւաստէ թէ գորգը կը նմանի Խոալիոյ Սիենա քաղաքին հիւանդանոցին որմանկարին (Wedding of the Foundling գծուած Domenico di Bartolozzi մօտաւորապէս 1440ին) մէջը գծուած գորգին, եւ կ'աւելցընէ. «Եւ կարելի է եզրակացընել իրաւացիօրէն որ այս վերջին գորգն ալ ատկէ շատ վերջը չէր գործուած: Նոյն իսկ անոր նկարագիրը ենթադրել կու տայ որ այդ գորգը կամ ուրիշ մը որմէն ընդօրինակուած էր՝ շատ աւելի հին էր: Իւրաքանչիւրը մօտաւոր քառակուսիները կը պարունակեն ութանկիւններ, որուն մէջ դեղին յատակի մը վրայ ներկայացուած է առասպելական պայքարը վիշապին եւ փիւնիկին որ ընդունուած էր իբր միակ (=չինական) զինանշան»²: Գորգը իրապէս կոշտ բանուածք մը կը ներկայացընէ, հաւանաբար արդիւնքը աննշան հիւսողի մը: Հիւսուելու թուականը կ'իյնայ 1440էն առաջ, եւ կը ներկայացընէ Հայ գորգի վիշապ գծաձեւը որ կը գործածուէր Արաբական ազդեցութեան շրջանէն առաջ:

Գծագրութեան նախնական պարզութիւնը խառնակուած կ'երեւի. ոչ կազմը,

եւ ոչ իսկ կրկնութիւնները կանոնաւոր են, այլ ցոյց կու տան խակ օրինակող ձեռք մը, մինչ բնագիրը՝ որքան որ այս օրինակէն կրնանք դատել՝ ունէր համաչափ բաժանումներ եւ գծագրութիւններ: Մէկ խօսքով կը հաւատամ թէ մեր ձեռքը հասածը Ժ.Գ.—Ժ.Է. դարու օրինակ մըն է որ վերջին արձագանքը կարելի է սեպել ատոր նման արուեստին: Այս գծարուեստը պէտք էր որ զարգացած ըլլար Նախաքրիստոնէական եւ յետ — քրիստոնէական սկզբնական շրջանին, Պարթեական Արշակունի հարստութեան ի Հայս մուտք գործելէն վերջ սկսելով, մինչեւ Քրիստոնէութենէ վերջ Արաբական տիրապետութեան՝ եւ աւելի լաւ եւս է ըսել՝ ազդեցութեան երեւիլը ի Հայս. այսինքն մինչեւ Բ.—Թ. դար, երբ անկէ վերջ միայն Հայաստանի խուլ անկիւններուն մէջ հազուադէպօրէն եւ խափօրէն շարունակուեցաւ կրկնուիլ: Այս վերջիններէն էր Սիենայի Ժ.Է. դարու կտորը (նկարուած պատկերի մէջ) եւ Պերլինի թանգարանի նմոյշը:

Հնագոյն Հայ արուեստը, իր գիծերուն խորհրդանշանակութեան մէջ մեծապէս զարգացած, պահած է անօրինակ պարզութիւն մը որ շատ աւելի գեղարուեստական է քան յաջորդող ճոխ, այլ խճողուած արուեստը: Այս արուեստի ժուժկալութիւնը գորգերու գծագրութեանց մէջ ալ տիրապետող էր: Պարզութեան տիրապետութիւնը, որ բնապաշտիկ պարզութիւն չէր, շարունակուեցաւ մինչեւ Արաբական ազդեցութեան ի Հայս երեւիլը, մօտաւորապէս Բ. դար, անկէ վերջ Արաբական ճոխասիրութիւնը եկաւ տիրապետել Հայկական գորգերուն մէջ, որ դժբախտաբար Հայացած քրիստոնէութեան պաշտպանութիւնը չէր վայելեր, ինչպէս որ ճարտարապետութիւնը, մանրանկարչութիւնը կը վայելէին: Հայկական գորգերը Արաբական ճոխասիրութիւնէն ազդուած սակայն պահեցին իրենց աւանդական ստեղծագործութիւնը եղող գծաձեւերը, թէեւ

1. Oriental Rugs 1927 էջ 91. — 2. Անդ էջ 92.